ներն, մտաւ խաներու վրաններն, Թուրի բերանը դրաւ մի խանի վզին, երկու ձեռքով Թրի երկու ծայրէն սեղմեց վզին, որպէս զի խրխրոցի ձայն մի չելլայ, նոյնը արաւ երկրորդին, և երրորդին ևս վերջացնելու վերայ էր։

—«Օ՜խ, մրռնիմ իդա ձեռաց», ասաց Օսկիատ։

Ամատէ բերուած աղջիկը Նաղի խանի ծոցն էր, արթնացաւ, Յովասափ Նորան ևս սպանեց և մութ գիշերն ինչաւ երկու աղջիկներու հետ Վիշապաձորի խորխորատներու մէջ պահուեցաւ։ Հետևեալ գիշերն անցաւ Երասխ, երկու օրէն վերջ հասաւ Արադած լերան կողերուն վերայ գտնուող Պաստարայ գիւղն, միջոց մի ծպտեալ մնաց այս տեղն, երկու երիտասարդի հետ ամուսնացուց աղջիկներն, ինքն ևս կնքահայր եղաւ։

Յովասափ դարձաւ Ալաշկերտ, աղջկանց ծնողաց յայտնեց եղածն և մխիթարեց։

Պարսից բանակն արդէն հեռացած էր, Յովասափ խորհեցաւ որ այլ ևս չէ կարող Պարսկաստան մնալ՝ երկու ընկերներով գնաց իւր ընտանիքը բերելու։ Պայազիտի մօտերն աւազակք յարձակուեցան իւր և երկու ընկերներու վերայ, կողոպտեցին, ինքը մինակ յարձակեցաւ աւազակաց վերայ 7 հոգին ևս կապեց, սպանեց և գնաց իւր ընտանիքը բերաւ, Ամատ գիւղն բնակեցաւ։ Նորա որդին զառամեալ վիճակի մէջ աղքատ և կուրացած է։

Իրական պատմութիւնն է այս, հարցուցէք Ամատցիներէն. կը ցանկայի նաև հարցանել Պաստարացիներէն թէ արդեօք կը յիշեն այդպիսի դէպք մի։